




Ծ Ի Ա Ծ Ա Ն

ԱՄՍԱԳԻՐ

✓7

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ.

ՅՈՒՂԻՍ

1865 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ



Երբքին Գործոց Ոստիկանարանին
ընդհանուր հրամանագրու-
թեանը համեմատ՝ հրաման
գրուեցաւ Առաջնորդական Ա-
տենէն ամենայն Հոգեւորական
Կառավարութեանց եւ երէցփո-
խանաց վիճակիս՝ որ նոր եկե-
ղեցիներուն գլխաւոր գոները
ամէնն ալ այնպէս շինուին այսուհետեւ որ
դէպ ի դուրս բացուին, եւ ոչ դէպ ի ներս.
Հիներուն գոներն ալ՝ եթէ դէպ ի ներս
բացուած են՝ փոխուին անպատճառ եւ դէպ
ի դուրս բացուին: — Այս խոհական կար-
գադրութեան պատճառն ալ յայտնի է. որ

եթէ յանկարծ, Տէր մի արասցէ, եկեղեցւոյ
մը մէջ կրակ կամ ուրիշ դժբաղդութիւն
պատահի, եւ ներքը շատ ժողովուրդ գտնուի
այն միջոցին, ամէնքը փախչող փախչողի
կլինին. եւ եթէ գոները դէպ ի ներս բա-
ցուին, ներսէն դուս ելնել ուղղութեամբ կըր-
նան մէկըմէկ կոխկըռտել ու մինչեւ մեռը-
նել եւս, ինչպէս որ տեղ տեղ պատահած
է նաեւ մօտ ատեններս:

— Ապրիլի 29-ին վախճանեցաւ ի Մոսքուա
Տէր Մովսէս աւագ քահանայն Տէր-Մովսէսեան
Աւամխանեանց ի հասակի 55 ամաց: Այս պա-
տուական եկեղեցականին գովելի ձիրքերէն

մէկն էր եռանդուն ճշմարտախօսութիւն
հանդերձ հիւրասէր ասպնջականութեամբ,
որովք զինքը ճանչցողներուն շատին սիրտը
գրաւած էր, եւ աւելի սիրելի եղած էր

Մոսքուայի համալսարանին մերազնեայ ու-
սանողներուն: Ինքը բնիկ Ղզլարցի էր, եւ 28
տարի էր որ կժառայէր՝ առաջ Փեթրսկուրկի
եւ յետոյ Մոսքուայի եկեղեցիներուն:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Լ. Ո. Ի. Բ. Բ.

Լազարեան ճեմարանին յիսնամեայ Յորե-
լինին հանդէսը ի պատճառս վախճանի Թա-
գաթառանգ Կայսրորդուհին Նիքոլայի Ալեք-
սանտրովիչ՝ ուրիշ յարմար ժամանակի ձը-
գուեր է, այսինքն, ինչպէս որ կըսեն, Օգոս-
տոսի 10-ին:

— Կգրեն մեզի երեւանէն թէ Ս. Էջմիած-
նայ միաբաններէն քանի մը հոգի վախճա-
ներ են մօտերս, որոց մահը ծանր սգոյ եւ
տրտմութեան մէջ ընկղմեր է Միաբանու-
թիւնը: Նոցա մէջ աւելի զգալի եղեր է ա-
մենուն Մուշեղեան Սիմեոն վարդապետին բըռ-
նական մահը, որ գանձապահ էր Սրբոյ
Աթոռոյն: Այս աչալուրջ եւ բարեբարոյ անձը
բնիկ Բաղիշեցի էր. եօթը տարի առաջ նախ-
անգամ եղած էր Աթոռիւնու Կոնսիստո-
րիային, յետոյ Յաջորդ Ղզլարու, եւ վերջե-
րըս չին Նախիջեւանու. իսկ այս տարի փե-
տրուար ամսոյն մէջ նշանակուեր էր Ս. Ա-
թոռոյն գանձապահ, եւ հաւատարմութեամբ
ու ազգասիրական հոգւով կկատարէր այն
ծանր պաշտօնը: Մայիսի 1-ին երեւանէն Ս.
Էջմիածին գառնալու ատենը՝ երբ հասեր է
Ղարսու ըստած տեղը, անկարծելի դիպուա-
ծով մը զարնուեր է, կըսեն, քովի պահանորդ-
ներէն մէկուն հրացանին պատահմամբ նե-

տուելովը, եւ գնտակը քարանքս ըստած
կառքին մէջ մտնելով՝ շիտակ գնացեր զար-
կեր է վարդապետին գլխուն, որ իսկոյն հո-
գին աւանդեր է:

— Խալիպեան Ուսումնարանին աշակերտաց
տարեկան հարցաքննութիւններն սկսան յու-
նիսի 7-ին, եւ վերջացան 16-ին: Գրեթէ ա-
մենայն դասարանաց մէջ եւ ամենայն առար-
կայից քննութեանը ներկայ գտնուեցաւ բաց
ի վարժապետաց նաեւ Գեր. Առաջնորդը, եւ
ընդհանրապէս վկայեցին ամէնքն ալ որ այս
տարի նախընթաց տարիներէն ալ աւելի յա-
ռաջագիմութիւն ունեցեր են աշակերտք ա-
մենայն ուսմանց մէջ՝ թէ իրենց ջանասիրու-
թեամբը եւ թէ վարժապետաց անխոնջ աշ-
խատութեամբը:

Ամսոյն 17-ին Գեր. Առաջնորդին դաս
տուած ուսմանցը, այսինքն բարոյական ի-
մաստասիրութեան եւ տրամաբանութեան
սկզբունքներուն քննութիւնն եղաւ հինգե-
րորդ եւ վեցերորդ դասարանաց մէջ. յե-
տոյ բոլոր աշակերտաց ի միասին խրատ մը
խօսեցաւ, եւ արձակուրդը սկսաւ. որով եւ
աշակերտաց մեծ մասը՝ այսինքն 83 հոգի
տեղերնին ճամբուեցան՝ ըստ խնդրոյ ծնո-
ղացն, պարապոյ միջոցը՝ ամիս ու կէս ժա-
մանակ՝ իրենց տները անցընելու համար: